«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն բաց ընթացակարգը հայտարարվում է համաձայն
«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ
ԿԳՄ 2016 թվականի
ապրիլի 15-ի նիստի որոշման և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն
Բաց ընթացակարգի ծածկագիրն է՝ «19-ՀՓ-2016-ՄԷԿ»

Պատվիրատուն՝«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ («ՄԷԿ» ՓԲԸ), որի հասցեն է Հայաստանի Հանրապետություն, 0021 ք. Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում:
Բաց մեկ փուլից կազմված, առանց նախնական ընտրության մրցույթի ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր գնման առարկա հանդիսացող՝ **տրված չափանիշներին համապատասխան ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիտորինգ՝ վարկային հաստատություններին ներկայացման նպատակով** , «ՄԷԿ» ՓԲԸ 2016 թվականի կարիքների համար
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:
Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները; ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասինե ՀՀ օրենքով և «ՄԷԿ» ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությամբ սահմանված կարգը:
Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Մրցութային փաթեթը հայերեն /ռուսերեն լեզվով ստանալու համար, անհրաժեշտ է 40 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հայտարարությունը հրապարակելու պահից գրավոր դիմել Պատվիրատուին հետևյալ հասցեով՝ 0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, մրցութային գնումների դեպարտամենտ, սենյակ 201, վճարելով «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ դրամարկղ կամ փոխանցելով հաշվարկային հաշվին «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ – 1570012654440100, ՀՎՀՀ-00078569- 25 000 (քսանհինգ հազար)ՀՀԴ:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2016 թ. մայիսի 24-ի ժամը 16:00, «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝ ***e.avetisyan@mek.am;***

Հայտերը բացվում են Ընկերության ԿԳՄ նիստին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը ՝2016 թվականի մայիսի 25-ին ժամը 10:00-ին:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:
Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյան , 010 24 50 99(202) հեռախոսահամարով:

Հ Ր Ա Վ Ե Ր

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑ ՄԵԿ ՓՈՒԼԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ՝ԱՌԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ ՏՐՎԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓԱԹԵԹԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ՝ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ՝ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ

ք. Երեւան
2016թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ընդհանուր տեղեկություններ մրցույթի վերաբերյալ

1.1. Մրցույթի Կազմակերպիչ հանդիսացող Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ /«ՄԷԿ» ՓԲԸ ՀՀ, 0014, ք. Երեւան, Ադոնցի փող. 10Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e'mail՝ office@mek.am/՝ մրցույթի անցկացման մասին հրապարակված Ծանուցմամբ (հրապարակվել է 2016 թ. ապրիլի "14-ին" "Ռուսհիդրո" ԲԲԸ միասնական տեղեկատվական պորտալում, բաժին «Գնումներ» www.rushydro.ru, «ՄԷԿ» ՓԲԸ կորպորատիվ ինտերնետային կայքում, բաժին «Գնումներ» www.mek.am) և ՀՀ Ֆինանսների Նախարարության պաշտոնական ինտերնետ-կայքում, բաժին «Գնումներ» www.minfin.am) հրավիրում է իրավաբանական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներ) մասնակցելու առանց նախնական որակավորման ընտրության բաց միափուլ մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ)՝ տրված չափանիշներին համապատասխան ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիտորինգ՝ վարկային հաստատություններին ներկայացման նպատակով (այսուհետ՝ Ծառայություններ) Պայմանագիր կնքելու իրավունքի նպատակով՝ Պատվիրատուի կարիքների համար:

1.1.2 Տեղեկությունների համար դիմել.

մրցույթի Պատվիրատուին՝ "ՄԷԿ" ՓԲԸ Կենտրոնական Գնումների Մարմնի պատասխանատու քարտուղար պրն. Ա. Բ. Բարսեղյանին. հեռախոս՝ 093 900 220; ֆաքս՝ 24 51 99; էլեկտրոնային հասցեն՝ a.barseghyan@mek.am;

1.1.3. Մրցույթն անց է կացվում «ՄԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի 2016 թվականի ապրիլի 14-ի թիվ 88 հրամանի հիման վրա:

1.1.4. Կատարվելիք աշխատանքներին ներկայացվող պահանջները շարադրված են բաժին 2-ում (այստեղ և այսուհետ հղումները վերաբերում են սույն Մրցութային փաստաթղթերին): Պայմանագրի նախագիծը, որը կկնքվի Մրցույթի արդյունքներով, ներկայացված է բաժին 3-ում: Մրցույթի անցկացման և դրանում մասնակցության կարգը, ինչպես նաև Մրցութային հայտերի նախապատրաստման հրահանգները բերված են 4 և 5 բաժիններում:

1.2. Փաստաթղթերի իրավական կարգավիճակը

1.2.1 1.1.1. կետին համապատասխան հրատարակված (պաշտոնական է համարվում «ՄԷԿ» ՓԲԸ սայթում հրատարակված տարբերակը)՝ Մրցույթի անցկացման մասին Ծանուցումը՝ իր անբաժանելի հավելվածը հանդիսացող սույն Մրցութային փաստաթղթերի հետ միասին հանդիսանում են Պատվիրատուի օֆերտա և մրցույթի Մասնակիցների կողմից պետք է դիտակվի այդպիսին՝ Մրցույթի անցկացման համար սահմանված ժամկետում:

1.2.2. Մրցույթի Մասնակցի մրցութային հայտն ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և կդիտարկվի այդպիսին Պատվիրատուի կողմից:

1.2.3. Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի կողմից ստորագրված՝ Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունն ունի պայմանագրի ուժ, որով սահմանվում է կողմերի պարտականությունը՝ կնքել Պայմանագիր

մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ, Մրցութային փաստաթղթերով և մրցույթը Հաղթողի Մրցութային հայտով սահմանված պայմաններով՝ հաշվի առնելով սույն Մրցութային փաստաթղթերի շրջանակներում սահմանված նախապայմանագրային բանակցությունների անցկացման հնարավորությունը:

1.2.4. Մրցույթի արդյունքներով կնքված Պայմանագիրն ամրագրում է կողմերի միջև ձեռք բերված բոլոր պայմանավորվածությունները:

1.2.5. Մրցույթի Հաղթողի հետ կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտագործվում են հետևյալ փաստաթղթերը՝ պահպանելով նշված հիերարխիան (դրանց հակասության դեպքում)

ա) Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև նախապայմանագրային բանակցությունների արձանագրությունները (այն պայմանների վերաբերյալ, որոնք ոչ սույն Մրցութային փաստաթղթերում, ոչ մրցույթը Հաղթողի Մրցութային հայտում չեն հիշատակվել)

բ) Մրցույթի արդյունքների մասին արձանագրություն,

գ) Մրցույթի անցկացման մասին Ծանուցում և սույն Մրցութային փաստաթղթերը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

դ) Մրցույթը Հաղթողի մրցութային հայտը՝ բոլոր լրացումներով և պարզաբանումներով,

1.2.6. Պատվիրատուի և Մրցույթի Մասնակիցների այլ փաստաթղթեր տվյալ Մրցույթի կապակցությամբ չեն սահմանում կողմերի իրավունքերն ու պարտականությունները :

1.2.7. Այն ամենում ինչը կարգավորված չէ Մրցույթի անցկացման մասին Ծանուցմամբ և սույն Մրցութային փաստաթղթերով, կողմերը ղեկավարվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով:

1.2.8. Եթե Մրցույթի արդյունքներով կնքվող Պայմանագրի կողմերի նկատմամբ գործում են նաև սահմանված կարգով հրապարակված և գրանցված բոլոր այլ հատուկ նորմատիվ իրավական ակտերը, սույն մրցութային փաստաթղթերը (և Պայմանագրի նախագիծը, որպես դրա մաս) և Հաղթողի մրցութային Հայտը կհամարվեն առաջնային՝ նշված փաստաթղթերի դիսպոզիտիվ նորմերի նկատմամբ:

1.3 Բողոքարկում

1.3.1. Մինչև պայմանագրի կնքումը տարաձայնությունները ուղարկվում են Կենտրոնական Գնման Մարմին: ԿԳՄ պատասխանատու քարտուղարը՝ տարաձայնությունների քննարկման դիմումն ստանալու դեպքում, անհապաղ այդ մասին տեղեկացնում է գնումն անցկացնող հանձնաժողովի նախագահին և Պատվիրատուի Տնօրենների խորհրդին: ԿԳՄ-ում տարաձայնությունների քննարկման ժամանակահատվածում կասեցվում է գնման գործընթացը՝ մինչև որոշման ընդունումը, եթե դրա համար չկան ակնհայտ իրավաբանական կամ տնտեսական բնույթի խոչընդոտներ :

1.3.2. Եթե տարաձայնությունները չեն լուծվում այն ներկայացնող մասնակցի և գնում իրականացնող անձանց փոխադարձ համաձայնությամբ, Պատվիրատուի ԿԳՄ նման տարաձայնություններ ստանալու պահից 10 օրյա ժամկետում կայացնում է գրավոր որոշում, որը պետք է բովանդակի՝

ա) որոշման ընդունման շարժառիթների հիմնավորումը,

բ) շարադրված պահանջների բավարարմանն ուղղված միջոցները՝ տարաձայնությունների մասնակի կամ ամբողջական լուծման դեպքում

1.3.3. ԿԳՄ իրավասու է ընդունել հետևյալ որոշումներից մեկը կամ մի քանիսը

ա) մրցույթների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մրցութային հանձնաժողովի՝ ոչ իրավաչափ գործողություններ կատարած, ապօրինի ընթացակարգեր կիրառած կամ ապօրինի որոշում ընդունած անդամներին պարտավորեցնել իրականացնել գործողություններ, կիրառել ընթացակարգեր կամ ընդունել որոշում՝ սույն Կանոնակարգին համապատասխան,

բ) ավարտված գնումների վերաբերյալ տարաձայնությունների դեպքում ղեկավարությանն առաջարկել ընդունել որոշում՝ ապօրինի գործողության, որոշման կամ ապօրինի ընթացակարգի կիրառման արդյունքում մասնակցի կրած վնասները փոխհատուցելու մասին: Եթե պայմանագրում ընգրկված է վերապահում՝ պայմանագրի կնքման ընթացակարգի խախտումների հայտնաբերման դեպքում պայմանագրի միակողմանի լուծման մասին, ԿԳՄ իրավասու է առաջարկել ղեկավարությանը պայմանագրի կնքումից հետո ընդունել որոշում պայմանագրի միակողմանի լուծման մասին,

գ) մասնակցի դիմումը չհիմնավորված ճանաչել

1.3.4. Մրցույթի անցկացման կապակցությամբ առաջացող բոլոր վեճերն ու տարաձայնությունները, այդ թվում՝ Պատվիրատուի և Մասնակիցների կողմից իրենց պարտավորությունների կատարմանը վերաբերող, որոնք չեն կարգավորվել Պատվիրատուի ԿԳՄ-ին բողոքարկման ճանապարհով՝ դատական կարգով՝ նրա իրավական կարգավիճակը և վեճերի լուծման կարգը սահմանող, հայցադիմում ներկայացնելու պահին գործող փաստաթղթերին համապատասխան:

1.3.5. Վերոնշյալը չի սահմանափակում կողմերի իրավունքները դիմելու դատարան՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

1.3.6. Սույն Մրցույթի անցկացման հետ կապված ցանկացած վեճի և տարաձայնության քննարկման դեպքում՝ կողմերը հաշվի են առնում, որ ենթակա է կիրարկման Հայաստանի Հանրապետության նյութական և դատավարական իրավունքը:

1.4. Այլ դրույթներ

1.4.1. Մասնակիցը ինքնուրույն է կրում Մրցութային հայտի նախապատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, իսկ Պատվիրատուն այդ ծախսերի կապակցությամբ պատասխանատու չէ և չունի պարտավորություններ՝ անկախ Մրցույթի ընթացքից և արդյունքներից, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ ուղղակի նախատեսված դեպքերի:

1.4.2. Պատվիրատուն ապահովում է Մրցույթի Մասնակիցներից ստացված բոլոր, այդ թվում՝ Մրցութային հայտերում բովանդակվող տեղեկությունների, խելամիտ գաղտնիությունը: Այդ տեղեկությունների տրամադրումը մրցույթի այլ Մասնակիցներին կամ երրորդ անձանց հնարավոր է միայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ կամ սույն Մրցութային փաստաթղթերով ուղղակի նախատեսված դեպքերում:

1.4.3. Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցութային հայտը, եթե նա բացահայտի, որ մրցույթի Մասնակիցը Պատվիրատուի աշխատակցին ուղղակի կամ անուղղակի տվել է, համաձայնվել է տալ կամ առաջարկել է ցանկացած տեսքով պարգևատրում, այն է՝ աշխատանք, ծառայություն, որևէ արժեքավոր իր որպես խթան, ինչը կարող է ազդեցություն ունենալ մրցույթի Հաղթող ճանաչելու՝ Մրցութային հանձնաժողովի որոշման ընդունման վրա:

1.4.4.Պատվիրատուն իրավասու է մերժել Մրցույթի այն Մասնակիցների Մրցութային հայտերը, որոնք կնքել են որևէ համաձայնություն՝ մրցույթի Հաղթողի ընտրության վրա ազդելու նպատակով:

1.4.5.Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցմանը համապատասխան Պատվիրատուն իրավունք ունի հրաժարվել մրցույթ անցկացնելուց ոչ ուշ քան մրցույթի արդյունքների ամփոփումից 5 (հինգ) օր առաջ, չկրելով և ոչ մի պատասխանատվություն մրցույթի Մասնակիցների կամ երրորդ անձանց առջև, որոնց նման գործողությունը կարող է վնաս պատճառել: Պատվիրատուն գրավոր ձևով անհապաղ ծանուցում է Մրցույթի բոլոր Մասնակիցներին մրցույթի անցկացումից հրաժարվելու մասին:

2. Ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանք

2.1 Ընդհանուր պահանջներ

2.1.1. Անհրաժեշտ թույլտվությունների և փաստաթղթերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները բերված են 4-րդ և 5-րդ բաժիններում:

2.2. Ծառայությունների մատուցմանը ներկայացվող պահանջներ

2.2.1. ա) Մատուցվող ծառայությունների ծավալները ներկայացված են սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 1-ում:

բ) Մատուցվող ծառայությունների ժամկետներին ներկայացվող պահանջներ՝ նշում է մրցույթի Մասնակիցը:

3. Պայմանագրի և Համաձայնագրի նախագիծ

3.1. ա) Մատուցվող ծառայությունների Պայմանագրի նախագիծը ներկայացված է սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 2-ում և Մատուցվող ծառայությունների Համաձայնագրի նախագիծը ներկայացված է սույն Մրցութային փաստաթղթերի Հավելված 3-ում:

4. Մրցույթի անցկացման կարգը: Մրցույթի հայտերի նախապատրաստման հրահանգներ

4.1. Մրցույթի անցկացման ընդհանուր կարգը

4.1.1. Մրցույթն անցկացվում է հետևյալ կարգով

ա) Մրցույթի անցկացման մասին Ծանուցման հրապարակում (4.2 ենթաբաժին),

բ) Մրցութային փաստաթղթերի տրամադրում կապալառուներին (4.3 ենթաբաժին),

գ) Մրցույթի Մասնակիցների կողմից իրենց Մրցութային հայտերի նախապատրաստում, Պատվիրատուի կողմից Մրցութային փաստաթղթերի պարզաբանում, եթե անհրաժեշտ է (4.4 ենթաբաժին),

դ) Մրցութային հայտերի ներկայացում և դրանց ընդունում (4.6. ենթաբաժին)

ե) Մրցութային հայտերով ծրարների բացում (4.7. ենթաբաժին),

զ) Մրցութային հայտերի գնահատում (4.8. ենթաբաժին),

ը) Մրցույթի Հաղթողի որոշում (4.9. ենթաբաժին),

թ) Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում (4.10. ենթաբաժին),

ժ) Պայմանագրի ստորագրում (4.11. ենթաբաժին),

ի) Մրցույթի արդյունքների մասին մրցույթի Մասնակիցներին ծանուցում (4.12. ենթաբաժին):

4.2. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման հրապարակում

4.2.1. Մրցույթ անցկացնելու մասին Ծանուցումը հրապարակվել է 1.2.1. կետում նշված կարգով:

4.2.2. Այլ հրապարակումները չեն հանդիսանում պաշտոնական և Պատվիրատուի համար որևէ հետևանքներ չեն առաջացնում:

4.3. Մրցութային փաստաթղթերի տրամադրում Մասնակիցներին

4.3.1. Մասնակիցները կարող են ստանալ Մրցութային փաստաթղթերը՝ գրավոր դիմելով Պատվիրատուին:

4.3.2. Պատվիրատուն պատասխանատու է մրցույթ անցկացնելու մասին Ծանուցման և Մրցութային փաստաթղթերի պայմանների կատարման համար միայն այն Մասնակիցների առջև, ովքեր Մրցութային փաստաթղթերը ստացել են 4.3.1 կետում նշված կարգով:

4.4. Մրցութային հայտերի նախապատրաստում

4.4.1. Մրցութային հայտին ներկայացվող ընդհանուր պահանջներ

4.4.1.1. Մրցույթի մասնակիցը պետք է նախապատրաստի մրցութային հայտը, որը ներառում է.

ա) Օֆերտայի ներկայացման մասին նամակ հավելվածներով՝ սույն Մրցութային փաստաթղթերում բերված ձևերին և հրահանգներին համապատասխան (բաժին 5),

բ) փաստաթղթեր, որոնք հաստատում են մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին (4.5 ենթաբաժին):

4.4.1.2. Մրցույթի Մասնակիցն իրավունք ունի ներկայացնել միայն մեկ Մրցութային հայտ: Այս պահանջի խախտման դեպքում մրցույթի այսպիսի Մասնակցի բոլոր Մրցութային հայտերը մերժվում են առանց ըստ էության քննվելու:

4.4.1.3. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ստորագրվի այն անձի կողմից, ով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի կամ նրա կողմից պատշաճ կերպով լիազորված անձը՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձ) հավատարմագրի հիման վրա: Վերջինիս դեպքում լիազորագրի բնօրինակը կցվում է Մրցութային հայտին:

4.4.1.4. Մրցութային հայտում ներառվող յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է ամրակցվի մրցույթի Մասնակցի կնիքով:

4.4.1.5. 4.4.1.3 և 4.4.1.4 կետերի պահանջները չեն տարածվում փաստաթղթերի՝ նոտարապես վավերացված պատճենների կամ տպագրական եղանակով կազմված փաստաթղթերի վրա:

4.4.1.6. Եթե ներկայացվում են տեղեկատվության լրացուցիչ կրիչները (սկավառակներ, CD-R, CD-RW, գրքույկներ, գրքեր), ապա դրանք, եթե դա հնարավոր է, պետք է լինեն համապատասխան ձևով նշագրված (օրինակ պիտակների օգնությամբ):

4.4.1.7. Դրանից հետո պետք է կատարվի Մրցութային հայտի անխտիր բոլոր էջերի համարակալում:

4.4.1.8. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ամրակցվեն կամ փաթեթավորվեն այնպես, որ բացառվի տեղեկատվական ծրարների և էջերի պատահաբար թափվելը կամ խառնվելը: Եթե Մրցութային հայտը բաղկացած է մի քանի հատորից, խորհուրդ է տրվում, յուրաքանչյուր հատոր կարել՝ կցելով դրանում ներառված փաստաթղթերի ցանկը: Յուրաքանչյուր այսպիսի հատոր պետք է ունենա էջերի միջանկյալ համարակալում:

4.4.1.9. Մրցույթի Մասնակիցը պետք է նախապատրաստի և Պատվիրատուին տրամադրի Մրցութային հայտի 1 բնօրինակ և 1 պատճեն թղթե կրիչով, ինչպես նաև հայտի 1 էլեկտրոնային կրկնօրինակ (ցանկալի է): Մրցութային հայտի պատճենները նախապատրաստվում են Մրցութային հայտում ներառված յուրաքանչյուր փաստաթղթի բնօրինակի պատճենահանման եղանակով՝ դրանց ստորագրումից և կնիքով վավերացումից, ինչպես նաև էջերի միջանկյալ համարակալումից հետո,, բայց կարելուց առաջ:

4.4.1.10. Մրցութային հայտի տեքստում և ոչ մի ուղղում ուժ չունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այս ուղղումները հաստատված «ուղղմանը հավատալ» ձեռագիր մակագրությամբ և լիազորված անձի ձեռագիր ստորագրությամբ՝ տեղակայված յուրաքանչյուր ուղղման կողքին:

4.4.2. Մրցութային հայտի գործողության ժամկետին ներկայացվող պահանջներ վերաբերյալ

4.4.2.1. Մրցութային հայտը վավեր է այն ժամկետի սահմաններում, որը նշված է օֆերտայի ներկայացման մասին՝ մրցույթի Մասնակցի նամակում (5.1. ենթաբաժին): Ամեն դեպքում, այդ ժամկետը չպետք է պակաս լինի 30 օրացուցային օրից, հաշված՝ մրցույթին ներկայացված Մրցութային հայտերի ծրարների բացման ընթացակարգի անցկացման օրվան հաջորդող օրվանից (4.7.1. կետ):

4.4.2.2. Գործողության առավել կարճ ժամկետի նշումը կարող է Մրցութային հայտի մերժման հիմք հանդիսանալ:

4.4.3. Մրցութային հայտի լեզվին ներկայացվող պահանջներ

4.4.3.1. Մրցութային հայտում ներառվող բոլոր փաստաթղթերը պետք է նախապատրաստվեն հայերեն/ռուսերեն լեզվով:

4.4.3.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները մրցույթի Մասնակցին տրվել են երրորդ անձանց կողմից այլ լեզվով կարող են ներկայացվել բնօրինակի լեզվով, պայմանով, որ դրանց կցված են այդ փաստաթղթերի հայերեն/ռուսերեն թարգմանությունները, (հատուկ վերապահված դեպքերում՝ ապոստիլացված): Փաստաթղթի հայերեն թարգմանության և այլ լեզվով փաստաթղթի բնօրինակի միջև անհամապատասխանության բացահայտման դեպքում Պատվիրատուն որոշումն ընդունելու է թանգմանության հիման վրա:

4.4.4. Մրցութային հայտի արժույթին ներկայացվող պահանջներ

4.4.4.1. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի դրամական միջոցների բոլոր գումարները պետք է արտահայտվեն հայկական դրամով:

4.4.4.2. Փաստաթղթերը, որոնց բնօրինակները՝ դրամական միջոցների գումարներն այլ արժույթով արտահայտված, տրվել են մրցույթի Մասնակցին երրորդ անձանց կողմից, կարող են ներկայացվել բնօրինակի արժույթով պայմանով, որ այդ փաստաթղթերին կցված կլինեն մեկնաբանություններ՝ տևյալ գումարները ՀՀ դրամին փոխակերպմամբ, ելնելով արժույթի՝ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած պաշտոնական փոխարժեքից՝ նշելով այդպիսի փախարժեքը և դրա սահմանման ամսաթիվը:

4.4.5. Սահմանային գին չի սահմանվում:

4.4.6. Մրցութային փաստաթղթերի պարզաբանում

4.4.6.1. Մրցույթի Մասնակիցներն իրավասու են դիմելու Պատվիրատուին սույն Մրցութային փաստաթղթի պարզաբանման համար: Մրցութային փաստաթղթի պարզաբանման պահանջները պետք է ներկայացվեն գրավոր տեսքով՝ կազմակերպության ղեկավարի կամ մրցույթի Մասնակցի այլ պատասխանատու անձի ստորագրությամբ:

4.4.6.2. Պատվիրատուն պարտավորվում է խելամիտ ժամկետում պատասխանել ցանկացած հարցի, որը նա կստանա Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալուց ոչ պակաս, քան 10 օր առաջ (4.6.5. կետ): Ընդ որում, պատասխանի պատճենը (առանց հարցի աղբյուրի մատնանշման) կուղարկվի մրցույթի՝ սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած բոլոր Մասնակիցներին (4.3 ենթաբաժին):

4.4.7. Մրցութային փաստաթղթերում ուղղումներ մտցնելը

4.4.7.1. Պատվիրատուն մինչև Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի լրանալը (4.6.5. ենթաբաժին) ցանկացած պահի իրավասու է ուղղումներ մտցնել սույն Մրցութային փաստաթղթի մեջ:

4.4.7.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3 ենթաբաժին) անհապաղ ծանուցվում են այսպիսի ուղղումների էության մասին օպերատիվ կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.7.3.Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն կարող է երկարաձգել Մրցութային հայտերի ընդունման ժամկետը (4.4.8. կետ):

4.4.8. Մրցութային հայտերի ընդունման վերջնաժամկետի երկարաձգումը

4.4.8.1.Անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն իրավունք ունի երկարաձգել՝ Մրցութային հայտերի ընդունման՝ 4.6.5. ենթաբաժնում սահմանված վերջնաժամկետը:

4.4.8.2. Սույն Մրցութային փաստաթղթերը պաշտոնապես ստացած՝ մրցույթի բոլոր Մասնակիցները (4.3. ենթաբաժին), անհապաղ գրավոր ծանուցվում են այդ մասին կապի միջոցների օգտագործմամբ (ֆաքս, էլեկտրոնային փոստ):

4.4.8.3. Պատվիրատուն նաև իրավասու է խնդրելու մրցույթի Մասնակիցներին՝ երկարաձգել Մրցութային հայտերի գործողության ժամկետը: Մրցույթի Մասնակիցն իրավասու է համաձայնվել այդպիսի խնդրանքի հետ կամ մերժել այն: Մրցութային հայտերի գործողության ժամկետը երկարաձգելու մասին՝ Պատվիրատուի խնդրանքի մերժումը չունի և ոչ մի բացասական հետևանք և մրցույթի այսպիսի Մասնակցի Մրցութային հայտը գործում է սկզբնապես սահմանված ժամկետի ընթացքում:

4.5. Մրցույթի Մասնակիցներին ներկայացվող պահանջներ: Ներկայացվող պահանջներին համապատասխանության հաստատում:

4.5.1. Մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջներ

4.5.1.1. Մրցույթին կարող է մասնակցել ցանկացած իրավաբանական անձ: Սակայն մրցույթում հաղթելու և Պատվիրատուի հետ Պայմանագիր կնքելու իրավունք ստանալու համար մրցույթի Մասնակիցը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

ա) մրցույթի Մասնակիցը պետք է տիրապետի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և փորձի, ունենա ռեսուրսային հնարավորություններ (ֆինանսական, նյութատեխնիկական, արտադրական, աշխատանքային), կառավարչական կոմպետենտություն, փորձ և համբավ ու համանման պայմանագրերի կատարման ոչ պակաս քան 3 տարվա փորձ `ներգետիկ վոլորտում,

բ) մրցույթի Մասնակիցը պետք է օժտված լինի քաղաքացիական իրավունակությամբ ամբողջ ծավալով՝ Պայմանագրի կնքման և կատարման համար (պետք է գրանցված լինի սահմանված կարգով և ունենա գործունեության տեսակների կատարման համապատասխան գործող արտոնագրեր՝ Պայմանագրի շրջանակներում),

գ) մրցույթի Մասնակիցը չպետք է անվճարունակ կամ սնանկ լինի, գտնվի լուծարման գործընթացում, մրցույթի Մասնակցի գույքի՝ պայմանագրի կատարման համար էական մասի վրա չպետք է կալանք դրված լինի, մրցույթի Մասնակցի տնտեսական գործունեությունը չպետք է կասեցված լինի:

4.5.2. Սահմանված պահանջներին մրցույթի Մասնակցի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերին ներկայացվող պահանջները

4.5.2.1. Վերոշարադրյալի հետ կապված՝ մրցույթի Մասնակիցը պետք է Մրցութային հայտի կազմում ընդգրկի վերոնշյալ պահանջներին նրա համապատասխանությունը հաստատող հետևյալ փաստաթղթերը.

a) գործող խմբագրությամբ կանոնադրության Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակը,

b) Պայմանագրի կատարման հետ կապված գործունեության տեսակների գործող արտոնագրերի Մասնակցի կողմից վավերացված կրկնօրինակները,

c) իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն,

d) Մասնակցի կողմից վավերացված հարկային մարմինների տեղեկանք՝ հարկերի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումներ կատարելու մասին,

4.5.2.2. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը գրանցված է Հայաստանի Հանրապետությունից դուրս, նա պարտավոր է ներկայացնել սույն Մրցութային փաստաթղթերի 4.5.2.1 կետով նախատեսված բոլոր փաստաթղթերը: Այն դեպքում, եթե Մասնակցի պետության օրենսդրությանը համապատասխան այս կամ այն փաստաթղթերի տրամադրումն անհնար է, Մասնակիցը պարտավոր է ներկայացնել տեղեկանք՝ այդպիսի պատճառների բացատրությամբ, ինչպես նաև (որքանով դա հնարավոր է) պահանջվողին բովանդակությամբ մոտ համանման փաստաթուղթ:

4.5.2.3. Բոլոր վերընշված փաստաթղթերը կցվում են Մրցութային հայտին՝ մրցույթի Մասնակցի կողմից:

4.5.2.4. Այն դեպքում, եթե որևիցե պատճառով մրցույթի Մասնակիցը չի կարող ներկայացնել պահանջվող փաստաթուղթը, նա պետք է կցի պահանջվող փաստաթղթի բացակայության պատճառը բացատրող, ինչպես նաև սույն պահանջին Մասնակցի համապատասխանության մասին Պատվիրատուին հավաստիացում բովանդակող, կամայական ձևով կազմված տեղեկանք:

4.6. Մրցութային հայտերի ներկայացումն ու դրանց ընդունումը

4.6.1. Ներկայացնելուց առաջ Մրցութային հայտը և դրա պատճենները պետք է ապահով ձևով կնքվեն ծրարներում (փաթեթներում, արկղերում և այլն): Մրցութային հայտը կնքվում է «Մրցութային հայտ» նշված բառերով ծրարում: Մրցութային հայտերը կնքվում են «Բնօրինակ» և «Կրկնօրինակ» նշված բառերով ծրարներում:

4.6.2. Այս ծրարներից յուրաքանչյուրի վրա անհրաժեշտ է նշել հետևյալ տեղեկությունները.

ա) Պատվիրատուի անվանումը և հասցեն 1.1.1. կետին համապատասխան,

բ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն,

գ) պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան:

4.6.3. Մրցութային հայտով և դրա պատճեններով՝ կնքված ծրարները տեղավորվում են մեկ արտաքին ծրարի մեջ, որը նույնպես պետք է ապահով կերպով կնքվի: Արտաքին ծրարի վրա նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

ա) Պատվիրատուի անունը և հասցեն՝ 1.1.1. կետին համապատասխան,

բ) Պայմանագրի առարկան՝ 1.1.1. կետին համապատասխան,

գ) «Չբացել մինչև 2016 թվականի մայիսի 25-ը, ժամը 10:00: Բացել միայն ԿԳՄ-ի նիստին» բառերը:

դ) մրցույթի Մասնակցի ամբողջական ֆիրմային անվանումը և նրա փոստային հասցեն:

4.6.4. Մրցույթի մասնակիցները պետք է ապահովեն իրենց մրցութային հայտերի առաքումը Պատվիրատուին՝ կոնտակտային անձ (1.1.2. կետ):

4.6.5. Մրցութայինի հայտերի վերջնաժամկետն է՝ 2016 թվականի մայիսի 24-ին ժամը 16:00: Վերոնշյալ ժամանակից ուշ ստացված մրցութային հայտերը, կմերժվեն Պատվիրատուի կողմից առանց ըստ էության քննվելու՝ անկախ ուշացման պատճառներից:

4.6.6. Պատվիրատուն ծրարն առաքող անձին տալիս է ստացական այն մասին, որ ինքը ստացել է ծրարը՝ նշելով այն ստանալու ժամանակը:

4.7. Մրցույթին ներկայացված ծրարների բացումը

4.7.1. Պատվիրատուն անց է կացնում ընդունված ծրարների բացման հրապարակային ընթացակարգը Ծանուցման մեջ նշված նասցեով և ամսաթվին:

4.7.2. Այս ընթացակարգին կարող են ներկա գտնվել մրցույթի Մասնակիցների ներկայացուցիչները, ովքեր ժամանակին ներկայացրել են իրենց մրցութային հայտերը: Ծրարների բացման ընթացակարգին ներկա գտնվելու իրավունքը հավաստելու համար Մասնակիցների ներկայացուցիչները պետք է ունենան Պատվիրատուի՝ ծրարները ստանալու մասին ստացականների բնօրինակները :

4.7.3. Մրցույթի Մասնակիցների ներկա գտնվող ներկայացուցիչները գրանցվում են, իսկ գրանցման թերթը կցվում է ծրարների բացման արձանագրությանը:

4.7.4. Սույն ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը բացում է ստացված յուրաքանչյուր ծրար և հրապարակում է հետևյալ տեղեկությունները՝ հիմնվելով Մրցութային հայտի նյութերի վրա.

ա) մրցույթի Մասնակցի անվանումը և հասցեն,

բ) կատարվող աշխատանքների անվանումը և Մրցութային հայտի ընդհանուր գինը,

գ) այլ տեղեկություններ, որոնք Մրցութային հանձնաժողովը անհրաժեշտ է համարում հրապարակել:

4.7.5. Բացման ընթացակարգի ժամանակ Մրցութային հանձնաժողովը վարում է համապատասխան արձանագրություն, որտեղ արտացոլված է Մրցութային հանձնաժողովի հրապարակած ողջ տեղեկատվությունը:

4.8. Մրցութային հայտերի գնահատումը

4.8.1. Ընդհանուր դրույթներ

4.8.1.1. Մրցութային հայտերի գնահատումն իրականացնում է ԿԳՄ-ը և ԿԳՄ-ի կողմից (անհրաժեշտության դեպքում) ներգրավված անձինք (փորձագետներ ու մասնագետներ):

4.8.1.2. Մրցութային հայտերի գնահատումը ներառում է ընտրական փուլը (4.8.2. կետ) և գնահատման փուլը (4.8.3. կետ):

4.8.2. Ընտրական փուլ

4.8.2.1. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը ստուգում է.

ա) մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը և դրանց համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերին ըստ էության,

բ) մրցույթի մասնակիցների համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը սույն Մրցութային փաստաթղթի պահանջներին:

4.8.2.2. Ընտրական փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի Մասնակիցներից պահանջել իրենց մրցութային հայտերի պարզաբանումները և լրացումները, այդ թվում՝ բացակայող փաստաթղթերի տրամադրում: Ընդ որում, Մրցութային հանձնաժողովն իրավասու չէ բացատրություն պահանջել կամ պահանջել պարզաբանումներ կամ փաստաթղթեր, որոնք փոխում են Մրցութային հայտի էությունը:

4.8.2.3. Մրցութային հայտերի ձևակերպման ճշգրտությունը ստուգելիս Մրցութային հանձնաժողովն իրավասու է ուշադրություն չդարձնել մանր թերություններին և վրիպակներին, որոնք չեն ազդում Մրցութային հայտի էության վրա: Մրցութային հանձնաժողովը կարող է ուղղել ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

4.8.2.4. Ընտրական փուլի անցկացման արդյունքներով Մրցութային հանձնաժողովը մերժում է այն մրցութային հայտերը, որոնք.

ա) էապես չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջներին,

բ) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համապատասխանում սույն Մրցութային փաստաթղթերի պահանջներին,

գ) տրված են մրցույթաի Մասնակիցների կողմից, ովքեր չեն տրամադրել սույն փաստաթղթերով պահանջվող փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են Մասնակցի կամ նրա կողմից առաջարկվող արտադրանքի մասին ոչ հավաստի տեղեկություններ,

դ) ներառում են սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված պայմաններին չհամապատասխանող առաջարկներ,

ե) տրված են մրցույթի Մասնակիցների կողմից, ովքեր չեն համաձայնվել Մրցութային հանձնաժողովի առաջարկի հետ՝ ուղղելու իրենց մրցութային հայտերի ակնհայտ թվաբանական կամ քերականական սխալները:

4.8.3. Գնահատման փուլ

4.8.3.1. Գնահատման փուլի շրջանակներում Մրցութային հանձնաժողովը համադրում և գնահատում է Մրցութային հայտերը՝ ըստ Մրցութային հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման չափանիշների՝ ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) աշխատանքների արժեքը և դրանց վճարման պայմանները,

բ) Մասնակցի որակավորումը (նմանատիպ պայմանագրերի քանակ),

գ) Մասնակցի հուսալիությունը (փորձ, ռեսուրսային հնարավորություններ և այլն):

4.9. Մրցույթի հաղթողին որոշելը

4.9.1. Նիստի ժամանակ Մրցութային հանձնաժողովը որոշում է մրցույթի Հաղթողին, որպես Մրցույթի մասնակցի, որի Մրցույթային հայտը գրավել է առաջին տեղը ըստ Մրցութային հայտերի՝ Պատվիրատուի համար նախընտրելիության աստիճանի՝ ըստ հաստատված գնահատման չափանիշների:

4.9.2. ԿԳՄ՝ մրցույթի Հաղթողի մասին որոշումը ձևակերպվում է ԿԳՄ նիստի արձանագրությամբ:

4.9.3. Մրցույթի Մասնակիցը անհապաղ տեղեկացվում է մրցույթի Հաղթող ճանաչվելու մասին, ինչպես նաև մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրման տեղի և կարգի մասին: (ենթաբաժին 4.10):

4.10. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրում:

4.10.1. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրության ստորագրումը նշանակվում է (կանխավ) մրցույթի արդյունքների ամփոփման ամսաթվից 5 (հինգ) օրվա ընթացքում՝ Պատվիրատուի հասցեով: Հատուկ դեպքերում մրցութային հանձնաժողովը կատող է երկարացնել տվյալ ժամկետը:

4.10.2. Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրվում է երկու օրինակով, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

4.10.3. Մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը յուրաքանչյուր կողմի հետ ստորագրվում է այն անձի կողմից, որը իրավունք ունի գործել մրցույթի Մասնակցի անունից առանց լիազորագրի՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան, կամ պատշաճ կերպով լիազորված անձի կողմից՝ լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ լիազորված անձի), ինչպես նաև ամրակցվում է կողմերի կնիքներով: Ընդ որում յուրաքանչյուր կողմ իրավասու է պահանջել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրած անձի իրավասության հաստատումը:

4.10.4. Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը, եթե մրցույթի Հաղթողը՝

ա) չի ստորագրի Պայմանագիրը՝ մրցույթի արդյունքների մասին Արձանագրությամբ սահմանված ժամկետում,

բ) կհրաժարվի Պայմանագրի ստորագրումից՝ 1.2.5 կետերում սահմանված պայմաններով,

գ) չի կատարի սույն Մրցութային փաստաթղթերով նախատեսված այլ պայմաններ:

4.11. Պայմանագրի ստորագրում

4.11.1. Պայմանագիրը Պատվիրատուի և մրցույթի Հաղթողի միջև սորագրվում է մրցույթի արդյունքների մասին Արձանագրության հիման վրա (ենթաբաժին 4.10) 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

4.11.2. Այն դեպքում, եթե ՀՀ գործող օրենսդրությամբ և Պատվիրատուի հիմնադիր փաստաթղթերով Պատվիրատուի կառավարման կոմպետենտ մարմինների կողմից (Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և այլն), պահանջվում է Հաղթողի առաջարկած պայմանագրի պայմանների համապատասխան նախնական համաձայնեցում (հավանություն, հաստատում), Հաղթողի հետ պայմանագիրը կնքվում է միայն այդպիսի համաձանեցումից (հավանություն, հաստատում) հետո, իսկ 4.11.1 կետում նշված ժամկետը հաշվվում է այդպիսի համաձայնություն (հավանություն, հաստատում) ստանալուց հետո:

4.11.3. Բոլոր այն հարցերի շուրջ, որոնք չեն արտացոլվել մրցույթի անցկացման մասին Ծանուցման, սույն Մրցութային փաստաթղթերի և մրցույթի Հաղթողի Մրցութային հայտի մեջ, կողմերը իրավունք ունեն բանակցություններ վարել: Բանակցությունների ընթացքը և ձեռք բերված արդյունքները ամրագրվում են մինչպայմանագրային բանակցությունների Արձանագրությունում:

4.11.4. Պայմանագրի պայմանները որոշվում են 1.2.5. կետին համապատասխան:

4.12. Մրցույթի Մասնակիցների տեղեկացումը մրցույթի արդյունքների մասին

4.12.1. Մրցույթի արդյունքների մասին արձանագրության ստորագրումից հետո Պատվիրատուն մրցույթի բոլոր Մասնակիցներին իրենց գրավոր հարցումին ծանուցում կուղարկի մրցույթի արդյունքների մասին:

4.12.2. Պատվիրատուն կհրապարակի մրցույթի արդյունքների մասին տեղեկությունները կամ այն մասին, որ մրցույթը տեղի չի ունեցել «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ www.mek.am կորպորատիվ ինտերնետային սայթում, բաժին «Գնումներ»:

4.12.3. Եթե արձանագրության ստորագրումից մինչև պայմանագրի ստորագրումը հաղթողը փոխվում է (օրինակ՝ հրաժարման արդյունքում) Մասնակիցները նույն կարգով են տեղեկացվում նոր հաղթողի մասին:

5.Մրցույթի մասնակցի պարտավորությունների կատարման ապահովումը տուժանքի ձևով

5.1.1.Մրցութային հայտերի ներկայացման հետ կապված մրցույթի Մասնակիցների պարտավորությունները ապահովվում են տուժանքով [նշվում է ապահովման գումարը (Պայմանագրի ենթադրվող արժեքի 3% ոչ ավել) կամ ապահովման գումարի հաշվարկման կարգը, օրինակ՝ «Պայմանագրի՝ Մասնակցի առաջարկած գնի 2% (հաշվի առնելով հարկերը):] դրամի չափով:

5.1.2.Տուժանքներով ապահովում են մրցույթի Մասնակցի հետևյալ պարտավորությունները՝

ա) Մրցութային հայտը իր գործողության ժամկետում չփոխելու և հետ չկանչելու պարտականություն՝ Մրցութային հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո (կետ 4.6.5).

բ) պարտականությունը՝ ակնհայտ կեղծ տեղեկություններ չներկայացնելու կամ դիտավորյալ չխեղաթյուրելու տեղեկատվությունը կամ փաստաթղթերը, որոնք ներկայացված են Մրցութային հայտի կազմում,

գ) 4.10. ենթաբաժնում նախատեսված կարգով մրցույթի արդյունքների մասին Արձանագրությունը ստորագրելու՝ մրցույթի Մասնակցի մրցույթի Հաղթող ճանաչելու դեպքում և նրան այդ մասին պատշաճ ծանուցելու պարտականությունը.

դ) սույն Մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով Պայմանագիր կնքելու պարտականություն (ենթաբաժին 4.11):

5.1.3.Վերոհիշյալ պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում մրցույթի Մասնակիցը պարտավոր է տուժանքի վճարման մասին մրցույթի Կազմակերպչի կողմից պահանջների ներկայացումից հետո տասը օրվա ընթացքում փոխանցել տուժանքի գումարը այդ պահանջում ներկայացված վավերապայմաններով:

5.1.4.Սույն բաժնի և առաջարկի հայտի կազմում ներկայացված տեքստերը միասին ունեն տուժանքի գրավոր համաձայնագրի ուժ:

5.1.5.Մրցույթի Կամակերպիչի իրեն իրավունք է վերապահում իր հայեցողությամբ պահանջել տուժանքի գումարի ընդհամենը մեկ մասը:

5.1.6.Մրցութային հայտի տեքստում մրցույթի Մասնակցի՝ տուժանքի վճարման պարտավորության բացակայությունը Մրցութային փաստաթղթերին համապատասխան կամ հայտում տուժանքի մասին պարտականությունների արտացոլումը, որը վերոշարադրյալ պահանջներին չի համապատասխանում, կարող է հիմք հանդիսանալ մրցույթի Մասնակիցի Մրցութային հայտի մերժման համար:

6. Մրցութային հայտում ներառվող փաստաթղթերի հիմնական ձևերի նմուշները

6.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակ (ձև 1)

6.1.1. Օֆերտայի ներկայացման մասին նամակի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

№----------

Հարգելի պարոնայք

Ուսումնասիրելով մրցույթի անցկացման Ծանուցումը՝ հրատարակված[նշվում է մրցույթի անցկացման մասին Ծանուցագրի հրապարակման ամսաթիվը և հրատարակությունը, որում այն հրատարակվել է], և Մրցութային փաստաթղթերը, և ընդունելով դրանցում սահմանված մրցույթի պայմանները և պահանջները,

_____

(Մասնակցի ամբողջական անվանումը՝ նշելով կազմակերպաիրավական ձևը)

գրանցված հետևյալ հասցեով _____

(մրցույթի Մասնակցի իրավաբանական հասցեն)

առաջարկում է հետևյալ աշխատանքների կատարման Պայմանագիր կնքել՝

_____

(Պայմանագրի առարկայի կրճատ նկարագրություն)

ընդհանուր գումարով

Մրցութային հայտի վերջնական արժեքը, առանց ԱԱՀ, դրամ

_____

(վերջնական արժեքը, դրամ, առանց ԱԱՀ)

բացի դրանից ԱԱՀ, դրամ

ընդամենը ԱԱՀ-ով, դրամ

_____

(ընդհանուր արժեքը, դրամ, ԱԱՀ-ով)

Սույն Մրցութային հայտը ունի օֆերտայի իրավական կարգավիճակ և գործում է մինչև _____“ ___ “ թվականը *(ոչ պակաս քան 40 օր սկսած Մրցութային հայտերի ծրարների բացման օրվանից):*

Սույն Մրցութային հայտը լրացվում է հետևյալ փաստաթղթերով՝ ներառյալ անբաժանելի հավելվածները՝

Կոմերցիոն առաջարկ (համաձայն մրցութային փաթեթի թիվ 2 հավելվածի) __ թ.

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրությունը (ձև 2) - ____թ.

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3) - ____թ.

Համանման պայմանագրերի կատարման ծավալների և ցանկի մասին տեղեկանք (ձև 4) - ____թ.

Մրցույթի Մասնակցի համապատասխանությունը սահմանված պահանջներին հաստատող փաստաթղթեր (բաժին 4.5.) ____-____թ.

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.1.2. Լրացման հրահանգներ

6.1.2.1. Նամակը հարկավոր է ձևակերպել մրցույթի Մասնակցի պաշտոնական բլանկի վրա: Մրցույթի Մասնակիցը տալիս է համար և ամսաթիվ՝ իր մոտ ընդունված փաստաթղթաշրջանարության կանոններին համապատասխան:

6.1.2.2. Մրցույթի Մասնակիցը պետք է նշի իր լրիվ անվանումը (կազմակերպչաիրավական ձևի նշումով) և իրավաբանական հասցեն:

6.1.2.3. Մրցույթի Մասնակիցը պետք է աշխանքների կատարման արժեքը նշի թվերով և բառերով, դրամով առանց ԱԱՀ, ԱԱՀ-ի մեծությունը և ԱԱՀ-ի հետ միասին՝ աշխատանքների գնի Կոմերցիոն առաջարկին համապատասխան (այունակ «ԸՆԴՀԱՆՈՒՐ»): Գինը հարկավոր է նշել XXX XXX XXX,XX դրամ ձևաչափով, օրինակ՝ «1 234 567,89 դրամ (Մեկ միլիոն երկու հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր վաթսունյոթ դրամ ութսունինը լումա)»:

6.1.2.4. Մրցույթի Մասնակիցը պարտավոր է նշել մրցույթին մասնակցելու Հայտի գործողության ժամկետը՝ 4.4.2.1 ենթակետին համաձայն:

6.1.2.5. Մրցույթի մասնակիցը պետք է թվարկի և նշի օֆերտայի ներկայացման մասին նամակին կցվող՝ մրցույթի Մասնակցի տեխնիկաառևտրային առաջարկի էությունը որոշող փաստաթղթերից յուրաքանչյուրի ծավալը:

6.1.2.6. Նամակը պետք է ստորագրվի և ամրակցի կնիքով 4.4.1.3 և 4.4.1.4 ենթակետերի պահանջներին համապատասխան:

6.2. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն (ձև 2)

6.2.1. Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրության ձև

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Պայմանագրի նախագծի տարաձայնությունների Արձանագրություն

Մրցույթի մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

Պայմանագրի «Պարտադիր» պայմանները

Պայմանագրի «Ցանկալի» պայմաններ

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.2.2. Պայմանագրի նախագծի տարածայնությունների Արձանագրության լրացման հրահանգներ

6.2.2.1. Մրցույթի Մասնակիցը բերում է օֆերտայի ներկայացման մասին նամակի համարը և ամսաթիվը:

6.2.2.2. Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և հասցեն:

6.2.2.3. Եթե մրցույթի Մասնակիցը իր Մրցութային հայտի հետ միասին չի ներկայացնում տվյալ ձևը, դա նշանակում է, որ իր կողմից լիովին ընդունվում է ներկայացված Պայմանագրի նախագիծը (բաժին 3):

6.2.2.4. Այն դեպքում, եթե մրցույթի Մասնակիցը ունի Պայմանագրի նախագծում փոփոխություններ մտցնելու առաջարկներ, մրցույթի Մասնակիցը պետք է իր մրցութային հայտի կազմի մեջ ներկայացնի տարածայնությունների տվյալ արձանագրությունը: Տարածայնությունների պատրաստված արձանագրությունում մրցույթի Մասնակիցը պետք է հստակ տարանջատի Պայմանագրի՝ իր համար պարտադիր և ցանկալի պայմանները: Այստեղ «Պարտադիր» են համարվում այն առաջարկները և պայմանները, որոնք չընդունելու դեպքում նա կհրաժարվի Պայմանագիրը ստորագրելուց: «Ցանկալի» են այստեղ համարվում Պայմանագրի պայմանների այն առաջարկները, որոնք նա առաջարկում է Պատվիրատուի քննարկմանը, որոնց մերժումը Պատվիրատուի կողմից, սակայն, չի հանգեցնի մրցույթի Մասնակցի՝ մրցույթի Հաղթող ճանաչվելու դեպում Պայմանագրի ստորագրումից հրաժարման:

6.2.2.5. Պայմանագրի պայմանները որոշվելու են 1.2.5 կետին համապատասխան:

6.2.2.6. Պատվիրատուն իրեն իրավունք է վերապահում մինչ Պայմանագրի ստորագրումը քննարկել և ընդունել Պայմանագրի առաջարկները և լրացուցիչ (սկզբունքային բնույթ չկրող) փոփոխությունները: Այն դեպքում, եթե կողմերը համաձայնության չգան այդ փոփոխությունների վերաբերյալ, ապա կողմերը պարտավորված կլինեն Պայմանագիրը ստորագրել այն պայմաններով, որոնք շարադրված են սույն Մրցութային փաստաթղթերում և մրցույթի Հաղթողի մրցութային հայտում:

6.2.2.7. Ցանկացած դեպքում Մրցույթի Մասնակիցը պետք է ի նկատի ունենա, որ՝

ա) եթե Պայմանագրային այն պարտադիր առաջարկներից և պայմաններից որևէ մեկը, որը առաջ է քաշվել Մասնակցի կողմից, Պատվիրատուի համար անընդունելի կլինի, այդ մրցութային հայտը կմերժվի անկախ տեխնիկաառևտրային առաջարկների բովանդակությունից:

բ) ամեն դեպքում մրցույթի Մասնակցի կողմից Պատվիրատուի պատրաստած պայմանագրի սկզբնական նախագծի տարածայնությունների արձանագրությունը ներկայացնելը չի զրկում մրցույթի Մասնակցին և Պատվիրատուին այդ պայմանները քննարկելու և դրանք փոփոխելու իր իրավունքից՝ նախապայմանագրային բանակցությունների ընթացքում՝ այդ պայմանները փոփոխելու համաձայնություն ձեռք բերելու համար::

6.3. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկը (ձև 3)

6.3.1. Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկի ձևը

ձևի սկիզբ

«----» ----------թվականի

թիվ ----------

Մրցույթի Մասնակցի հարցաթերթիկ

Մրցույթի Մասնակցի հասցեն և անվանումը՝ _____

_____
(Կ.Տ. ստորագրություն)

_____
(ստորագրողի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը)

ձևի ավարտ

6.5.2. Լրացման հրահանգներ

6.5.2.1.Մրցույթի Մասնակիցը նշում է մրցութային հայտի ամսաթիվը և համարը՝ օֆերտայի ներկայացման մասին նամակին համապատասխան (ենթաբաժին 5.1.):

6.5.2.2.Մրցույթի Մասնակիցը նշում է իր ֆիրմային անվանումը (այդ թվում կազմակերպաիրավական ձևը) և իր հասցեն:

6.5.2.3.Այս ձևում մրցույթի Մասնակիցը նշում է ծավալներով, կատարման ժամկետներով և 2 և 3 բաժինների այլ պահանջներով համադրելի համանման պայմանագրերի կատարման տարեկան ծավալները և ցանկը:

6.5.2.4. Մրցույթի Մասնակիցը կարող է ինքնուրույն ընտրել այն պայմանագրերը, որոնք, իր կարծիքով, լավագույն կերպով բնութագրում են իր փորձը:

6.5.2.5.Մրցույթի մասնակիցը կարող է ներառել նաև չավարտված պայմանագրեր՝ տվյալ փաստը անպայմանորեն նշելով:

Հավելված 1
Приложение 1

Տրված չափանիշներին համապատասխան ֆինանսական տեղեկատվության փաթեթի պատրաստման մոնիտորինգ՝ վարկային հաստատություններին ներկայացման նպատակով

Ընկերությունը հայտարարում է մրցույթ, ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ հետևյալ բաղդատմամբ:

ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համապատասխան՝ ֆինանսական հաշվետվությունների և անկախ աուդիտորական եզրակացության թարգմանությունները հայերեն և ռուսերեն լեզուներով

Մեթոդաբանական առաջարկներ ՖՀՄՍ 34-ին համապատասխան 2016թ. հունիսի 30-ի, 2016թ., սեպտեմբերի 30-ի, 2016թ. դեկտեմբերի 31-ի և 2017թ. մարտի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ

Պատվիրատուի ղեկավարության կողմից եռամսյակային կառավարչական հաշվետվությունների պատրաստման և Վարկատուներին ժամանակին տրամադրման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Վերականգնման ծրագրի կատարման եռամսյակային հաշվետվության (այդ թվում՝ ֆինանսական պլանի կատարման վրա բացասական ազդեցություն ունեցող գործոնների մասին հաշվետվությունը կամ այդպիսի գործոնների բացակայության հաստատումը) պատրաստման և Վարկատուներին ժամանակին տրամադրման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Փոխառու միջոցներով ֆինանսավորվող կապալառուների վերաբերյալ (եթե նրանց հետ կնքված պայմանագրերի արժեքը գերազանցում է 5 000 000 ԱՄՆ դոլարը) եռամսյակային հաշվետվության և Վարկատուներին ժամանակին տրամադրման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Պատվիրատուի բաժնետերերի և փոխկապակցված կողմերի հետ բոլոր գործարքների վերաբերյալ (եթե դրանց արժեքը գերազանցում է 5 000 000 ԱՄՆ դոլարը) եռամսյակային հաշվետվության կամ այդպիսի գործարքների բացակայության հաստատման պատրաստման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Ներդրումների արդյունավետության մասին տարեկան հաշվետվության պատրաստման գործընթացի և Վարկատուներին ժամանակին տրամադրման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Վարկատուների ներկայացուցիչների հետ կապի պահպանում: Վարկատուներին անհրաժեշտ տեղեկատվության պատրաստման գործընթացի դիտանցում / աջակցություն: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Վարկատուներին ապահովագրերի պատճենների ժամանակին ներկայացման գործընթացի դիտանցում: Ծառայության մատուցման ժամկետները սահմանվում են Պատվիրատուի և Վարկատուների միջև կնքված պայմանագրերով:

Վարկատուներին բնապահպանական և սոցիալական հարցերի մասին ժամանակին հաշվետվության ներկայացման գործընթացի դիտանցում: Ծառայությունը չի ներառում Կատարողի մասնագետների կողմից հաշվետվությունների պատրաստումը:

Հավելված 2

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № _____

սահմանված չափանիշներին համապատասխան վարկային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական տեղեկատվությունների պատրաստման դիտանցման

ք.Երևան ___ _____2016թ.

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս գլխավոր տնօրեն Արսեն Ռազմիկի Գրիգորյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

_____ (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս _____, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Կատարողը պարտավորվում է սահմանված չափանիշներին համապատասխան Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (այսուհետ՝ «ՎԶԵԲ») և Ասիական զարգացման բանկին (այսուհետ՝ «ԱԶԲ», միասին՝ «Վարկատուներ») տրամադրվող ֆինանսական տեղեկատվությունների պատրաստման դիտանցման ծառայություններ մատուցել Պատվիրատուին՝ սույն Պայմանագրով սահմանված պայմանների հիման վրա և համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ի (այսուհետ՝ «Ծառայություններ»):

1.2. Ծառայությունները կմատուցվեն սույն Պայմանագրի Հավելված 1-ին համապատասխան ձևով:

1.3. Ծառայությունները կմատուցվեն 2016թ. _____ ___-ից մինչև 2017թ. _____ ___-ը ընկած ժամանակահատվածում:

2. Կատարողի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Կատարողը պարտավորվում է Ծառայությունները մատուցել Պատվիրատուին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում:

2.2. Ծառայությունների մատուցման նպատակների համար Կատարողն իրավասու է ստանալ Պատվիրատուի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ ողջ անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը, ինչպես նաև ամբողջական և մանրամասն պատասխաններ Ծառայությունների մատուցման ընթացքում առաջադրված բոլոր հարցերին:

2.3. Կատարողն իրավասու է իր հայեցողությամբ կատարել փոփոխություններ Ծառայությունների մատուցման կարգում, որոնք չեն ազդում Ծառայությունների բովանդակության վրա:

2.4. Պատվիրատուի կողմից սույն Պայմանագրի 3 բաժնով նշված պարտականությունները ժամանակին կատարելու դեպքում Կատարողը ծառայությունների մատուցումը կավարտի ոչ ուշ, քան 2016թ. . _____ ___-ը:

3. Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Պատվիրատուն վճարում է Կատարողի Ծառայությունների դիմաց սույն Պայմանագրի 5 բաժնով նախատեսված չափով և ժամկետներում:

3.2. Պատվիրատուն պարտավորվում է իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները՝ ապահովելու այն անձանց իրավունքների պաշտպանությունը, որոնց անձնական տվյալները կարող են հասանելի դառնալ Կատարողին Ծառայությունների մատուցման ընթացքում, այդ թվում.

(ա) ծանուցել նշված անձանց իրենց տվյալների մշակման նպատակների և հիմքերի, տվյալների ենթադրվող գործածողների և Կատարողի կողմից իրենց անձնական տվյալների մշակման մասին և ստանալ այդպիսի մշակման համար նրանց համաձայնությունը.

(բ) նշված անձանց տրամադրել տեղեկատվություն Կատարողի՝ որպես իրենց անձնական տվյալների մշակումն իրականացնող Օպերատորի մասին:

Պատվիրատուն հաստատում է, որ իրավունք ունի անձնական տվյալները փոխանցել Կատարողին և որ Կատարողը կարող է մշակել Պատվիրատուից ստացված անձնական տվյալները: Պատվիրատուն կփոխհատուցի Կատարողի բոլոր ծախսերն ու կորուստները, որոնք նա կրել է Պատվիրատուի կողմից սույն կետով սահմանված իր պարտավորությունները չկատարելու հետևանքով:

3.3 Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին տրամադրել վերջինիս կողմից հայցվող բոլոր հաշվապահական տվյալները և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը ոչ ուշ, քան սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ժամկետներում:

3.4. Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուն պարտավորվում է տրամադրել տեղեկանքներ և անհրաժեշտ փաստաթղթերի պատճեններ, ինչպես նաև տալ Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից առաջադրված հարցերի հավաստի բանավոր և գրավոր պատասխաններ:

3.5. Պատվիրատուն իրավունք ունի մատուցված Ծառայությունների վերաբերյալ նյութերը տրամադրել երրորդ անձանց, սակայն իրավունք չունի հղում կատարել Կատարողին՝ որպես Վարկատուներին ներկայացվող հաշվետվությունների պատրաստման գծով խորհրդատվական ծառայություններ մատուցող անձի:

3.6. Պատվիրատուն իրավասու է հրաժարվել սույն Պայմանագրի կատարումից՝ Կատարողին վերջինիս փաստացի կատարած ծախսերի հատուցման պայմանով: Սույն Պայմանագրի շրջանակներում փաստացի ծախսեր են համարվում Ծառայությունների մատուցման կապակցությամբ Կատարողի կրած ծախսերը:

3.7. Պատվիրատուն պարտավորվում է Ծառայությունների մատուցման համար տարածք տրամադրել Կատարողին սույն Պայմանագրի 1.3 կետում նշված ժամանակահատվածում:

4. Ծառայությունների մատուցման կարգը

4.1. Ծառայություններ մատուցելիս Կատարողը հիմք է ընդունում Ծառայությունների մատուցման պահին առկա իրավակիրառական փորձի հիման վրա մշակված՝ կիրառելի օրենսդրության մեկնաբանումները:

4.2. Պատվիրատուն ինքնուրույն գնահատում է տեղեկատվության և սույն Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում ստացված նյութերի գործնական կիրառման հնարավորությունը: Կատարողը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի հանդեպ

Ծառայությունների մատուցման արդյունքում վերջինիս կատարած եզրահանգումների համար, ինչպես նաև Ծառայությունների մատուցման արդյունքում Պատվիրատուի կողմից ստացված տեղեկատվության գործնական կիրառման համար, ներառյալ, սակայն ոչ միայն, Վարկատուների պահանջներին համապատասխան հաշվետվությունների ինքնուրույն պատրաստման որակը:

4.3. Պատվիրատուն երաշխավորում է խորհրդատվություններին մասնակցող մասնագետների, ներառյալ մասնագիտական դատողությունների գնահատման և Պատվիրատուի հաշվետվությունների կազմման համար պատասխանատու մասնագետի որակավորման բավականաչափ մակարդակ:

4.4. Պատվիրատուի մասնագետներն ինքնուրույն են կատարում բոլոր անհրաժեշտ մասնագիտական դատողությունները, անում են ենթադրություններ, հաշվարկներ և գնահատումներ, ինչպես նաև կայացնում են անհրաժեշտ որոշումներ:

4.5. Պատվիրատուն պատասխանատու է Պատվիրատուի մասնագետների կողմից որակյալ տեղեկատվության ժամանակին հավաքման համար, որն ամբողջական ծավալով, առանց հետագա ստուգման, կօգտագործվի Կատարողի կողմից սույն Պայմանագրի նպատակների համար: Կատարողը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուի կողմից իրեն տրամադրված տեղեկատվության ամբողջականության և հավաստիության համար: Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման նպատակով Կատարողին տրամադրված տեղեկատվության ամբողջականության և հավաստիության համար պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն:

5. Կատարողի ծառայությունների դիմաց վարձատրության չափը և կարգը

5.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների գինը հաշվարկվում է Կատարողի վարձատրության գումարի հիման վրա: Վարձատրության գումարը կազմում է _____ (_____) ՀՀ դրամ: Ծառայությունների գինն ավելացվում է գործող օրենսդրությամբ սահմանված դրույքով հաշվարկված ԱԱՀ-ի գումարով: Սույնով Պայմանագրի Կողմերը եկել են համաձայնության, որ Կողմերից յուրաքանչյուրն ինքնուրույն է իրականացնում գործող օրենսդրության համաձայն որոշվող հարկերի վճարման իր պարտականությունը:

Ծառայությունների գնի վճարման հաշիվները ներկայացվում են Կատարողի կողմից հետևյալ կարգով.

- _____ (_____) ՀՀ դրամը վճար-վում է 2016թ. սեպտեմբերի 30-ին ավարտ-վող 9 ամսվա համար ֆինանսական հաշ-վետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) (IAS) 34-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման մեթոդաբանական առա-ջարկները Հաճախորդին ներկայացնելու ամսաթվից 7 (յոթ) օրվա ընթացքում.
- _____ (_____) ՀՀ դրամը, ինչպես նաև գործող օրենսդրությամբ սահմանված դրույքով հաշվարկված ԱԱՀ-ի ումարը վճարվում է Ծառայությունների մատուցման ավարտից հետո 7 (յոթ) օրվա ընթացքում:

Կատարողը ներկայացնում է Ծառայությունների հաշիվները ՀՀ դրամով: Պատվիրատուն կատարում է Կատարողի հաշիվների վճարումը ՀՀ դրամով:

5.2. Սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան Ծառայությունների մատուցման ավարտից հետո կողմերը ստորագրում են Ծառայությունների մատուցման ակտ: Պատվիրատուն պետք է ստորագրի համապատասխան ակտը և վերադարձնի այն Կատարողին՝ ակտը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կամ նույն ժամկետում տրամադրի ակտը ստորագրելուց հրաժարվելու գրավոր հիմնավորում: Այն դեպքում, երբ Կատարողը չի ստանում ստորագրված ակտը կամ այն վերը նշված ժամկետում ստորագրելուց հրաժարվելու հիմնավորում, Ծառայությունները համարվում են պատշաճ կերպով մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված:

5.3. Կողմերը համաձայնվում են, որ, Ծառայությունների բնույթից ելնելով, կարող է առաջանալ սույն Պայմանագրի պայմաններով չսահմանված ծառայությունների մատուցման անհրաժեշտություն: Կատարողն անհապաղորեն կտեղեկացնի Պատվիրատուին նման հանգամանքների առաջացման մասին, նշելով Ծառայությունների մատուցման համար երկարաձգված հիմնավորված ժամկետները և Ծառայությունների բարձրացված գինը, և Կողմերը կստորագրեն Պայմանագրին կից լրացուցիչ համապատասխան համաձայնագիր: Կատարողն իրավասու է շարունակել Ծառայությունների մատուցումը, հաշվի առնելով մատուցվող ծառայությունների լրացուցիչ ծավալը, միայն Պայմանագրին կից համապատասխան լրացուցիչ համաձայնագիր կնքելու պայմանով: Այդ դեպքում

Ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգվում է այն ժամկետով, որն անհրաժեշտ է լրացուցիչ համաձայնագրի համաձայնեցման և Կողմերի կողմից ստորագրման համար, ինչպես նաև լրացուցիչ ծառայությունների մատուցումն իրականացնելու ժամկետով՝ Կողմերի միջև համաձայնեցված կարգով: Նման երկարաձգումը Կողմերի միջև լրացուցիչ ծառայությունների մատուցման կարգը սահմանող՝ Պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր կնքելու դեպքում չի հանդիսանում Կատարողի կողմից Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների խախտում: Մատուցվող ծառայությունների լրացուցիչ ծավալի հետ կապված՝ Ծառայությունների գնի ավելացումը պետք է հաշվարկվի Կատարողի դրույքներին համապատասխան: Ծառայությունների գինը և վճարման կարգը Կողմերի միջև լրացուցիչ համաձայնագրի կնքման դեպքում պետք է սահմանվեն այդ լրացուցիչ համաձայնագրում:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ Կատարողի ցանկացած քաղաքացիաիրավական պատասխանատվություն, ներառյալ բոլոր փոփոխություններն ու կից փաստաթղթերը, ոչ մի հանգամանքներում չի կարող գերազանցել իրական վնասի կամ սույն Պայմանագրով Պատվիրատուի կողմից Կատարողին վճարված վարձատրության գումարը, կախված այն հանգամանքից, թե նշված գումարներից որն է ավելի քիչ: Քաղաքացիական պատասխանատվության տվյալ սահմանափակումը կիրառելի է այն չափով, որքանով այն չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

6.2. Կատարողը ենթարկվում է պատասխանատվության սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար միայն իր գործողությունների (կամ անգործության) մեջ մեղքի առկայության դեպքում:

6.3. Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կամ մասնակի չկատարման համար պատասխանատվությունից, եթե այն տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի հանգամանքների բերումով, ներառյալ, սակայն ոչ միայն, հրդեհները, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, համաճարակները և այլ բնական աղետները, զինված հակամարտությունները և հեղափոխումները, ահաբեկչական գործողությունները, քաղաքացիական խռովումները, ծավալային գործադուլներն ու շրջափակումները, հասարակական կյանքի այլ նման հանգամանքները, պետական մարմինների որոշումներն ու գործողությունները, որոնք ուղղակիորեն խոչընդոտում են սույն Պայմանագրով սահմանված Կողմերի պարտավորությունների կատարմանը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք իրենց բնույթի և ազդեցության շնորհիվ կարող են դասվել անհաղթահարելի ուժի հանգամանքների:

6.4. Այն կողմը, որի համար անհնարին է դարձել սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարումը, պետք է անհապաղ գրավոր տեղեկացնի մյուս կողմին անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման և դադարման մասին: Անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման փաստը պետք է հաստատվի իրավասու պետական մարմնի կամ հաստատության տեղեկանքով: Եթե անհրաժեշտ տեղեկանքի տրամադրումը չի մտնում պետական մարմինների կամ հաստատությունների իրավասության մեջ, ապա անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման փաստը պետք է հաստատվի մասնագիտացված կազմակերպության եզրակացությամբ: Հաստատում չեն պահանջում այն հանգամանքները, որոնք համընդհանուր հայտնի են իրենց ծավալի կամ զանգվածային լրատվության միջոցներով լայն լուսաբանման շնորհիվ:

6.5. Անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման կամ դադարման մասին չտեղեկացնելը կամ ժամանակին չտեղեկացնելը զրկում է կողմին դրանց հղում կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ նման տեղեկացման համար խոչընդոտ են հանդիսացել հենց այդ հանգամանքները:

6.6. Սույն Պայմանագրով սահմանված Պարտավորությունների կատարման ժամկետները երկարաձգվում են անհաղթահարելի ուժի հանգամանքների գործողության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի հանգամանքները շարունակվում են 4 (չորս) ամսից ավել, Կողմերից ցանկացածն իրավունք ունի հրաժարվել Պայմանագրի կատարումից, այդ մասին տեղեկացնելով մյուս կողմին՝ Պայմանագրի կատարման կապակցությամբ մյուս կողմի փաստացի կրած ծախսերի հատուցման պայմանով:

7. Մտավոր սեփականության իրավունքներ

7.1. Սույն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուին չեն փոխանցվում տրամադրվող նյութերի

օգտագործման որևէ իրավունքներ, բացառությամբ Վարկատուների պահանջներին համապատասխան հաշվետվությունների պատրաստման նպատակով դրանց օգտագործման իրավունքի: Պատվիրատուն, բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված նպատակների համար տրամադրվող նյութերի օգտագործման անհրաժեշտության և դրանց ռեզերվային պատճենների ստեղծման, իրավասու չէ ամբողջությամբ կամ մասնակիորեն բազմացնել, պատճենահանել կամ որևէ կերպ տարածել սույն Պայմանագրի շրջանակներում ստացված նյութերը՝ առանց Կատարողի գրավոր համաձայնության:

7.2. Այն դեպքում, երբ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման շրջանակներում Պատվիրատուին փոխանցվում է որևէ ծրագրային ապահովում (ինչպես տրամադրվող նյութերի կազմում, այնպես էլ առանձին), նման ծրագրային ապահովման փոխանցման և օգտագործման բոլոր պայմանները պետք է համաձայնեցվեն Կողմերի միջև սույն Պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագրով: Այն դեպքում, երբ նման լրացուցիչ համաձայնագիրը բացակայում է, ծրագրային ապահովման փոխանցման էական պայմանները համարվում են չհամաձայնեցված, իսկ Կատարողը պարտավոր չէ փոխանցել ծրագրային ապահովումը Պատվիրատուին:

8. Գաղտնիություն

8.1. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի կողմից գաղտնի տեղեկատվություն է ճանաչվում ցանկացած տեղեկատվություն, որը փոխանցվել է Կողմերից յուրաքանչյուրին մյուս կողմից կամ երրորդ անձանցից Պայմանագրի շրջանակներում կամ Ծառայությունների մատուցման ընթացքում:

Գաղտնի տեղեկատվությունը ենթակա չէ բացահայտման երրորդ անձանց՝ առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության, բացառությամբ հետևյալ դեպքերի.

(ա) երբ տեղեկատվության բացահայտումը պահանջվում է օրենքով.

(բ) երբ կողմը բացահայտում է գաղտնի տեղեկատվությունն իր իրավախորհրդատուներին և ապահովագրողներին, որոնք ներգրավվում են փաստացի կամ հնարավոր վեճի դեպքում կամ վեճի առաջացման սպառնալիքի դեպքում, ինչպես նաև «ՓրայսուոթերհաուսԿուպերս»-ի այլ ֆիրմաներին և երրորդ անձանց, որոնք ներգրավվում են Կատարողի կողմից Ծառայությունների մատուցման համար.

(գ) Պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

8.2. Սույն Պայմանագրի կապակցությամբ ստացված տեղեկատվության մասով գաղտնիության ռեժիմի պահպանման Կողմերի պարտավորություններն ուժի մեջ են նման տեղեկատվության ստացման ամսաթվից հինգ տարվա ընթացքում: Ընդ որում, Պատվիրատուն Կատարողին և «ՓրայսուոթերհաուսԿուպերս»-ի այլ ֆիրմաներին տրամադրում է Պատվիրատուին Ծառայություններ մատուցելու փաստին հղում կատարելու իրավունք՝ Ծառայությունների մատուցման բնագավառում իրենց փորձառությունը նշելու համար:

8.3. Կողմերը պատասխանատվություն չեն կրում գաղտնի տեղեկատվության բացահայտման համար հետևյալ դեպքերում.

(ա) երբ տեղեկատվությունը դառնում է հանրության համար մատչելի որևէ այլ կերպ, քան Պայմանագրի սույն հոդվածում նշված պարտավորությունների խախտումը.

(բ) երբ տեղեկատվությունը ստացվել է երրորդ կողմից, որը Կողմերից որևէ մեկի հանդեպ չի կրում նման տեղեկատվության մասով գաղտնիության ռեժիմի պահպանման պարտավորություններ.

(գ) երբ տեղեկատվությունը տրամադրվում է իրավասու պետական մարմնի պահանջով՝ օրենսդրությանը համապատասխան. ընդ որում, բոլոր այլ երրորդ անձանց նկատմամբ ուժի մեջ են մնում գաղտնի տեղեկատվության գաղտնիության պահպանման պարտավորությունները.

(դ) երբ տեղեկատվությունը ստացվել է երրորդ կողմի կողմից ոչ իրավասու գործողությունների ճանապարհով:

8.4. Պայմանագրի գործողության ավարտից հետո Կատարողն իրավասու է իր մոտ պահել Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի կողմից պատրաստված ցանկացած փաստաթղթի կամ ծրագրային ապահովման մեկական օրինակ, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործված ցանկացած թղթակցության պատճենները՝ Պատվիրատուի հետ մասնագիտական փոխգործակցության փաստը հաստատելու համար: Կատարողն իրավասու է ոչնչացնել սույն կետին համապատասխան իր տրամադրության տակ մնացած պատճենները, որոնք

կորցրել են իրենց նշանակալիությունը, դրանց ստացման կամ ստեղծման ամսաթվից հինգ տարի անց: Կատարողը պարտավոր է պահպանել սույն Պայմանագրի շրջանակներում Պատվիրատուից ստացված տեղեկատվության մասով գաղտնիության ռեժիմը նման տեղեկատվության իր տրամադրության տակ գտնվելու ողջ ընթացքում:

9. Պայմանագրի գործողության ժամկետը

9.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի կողմից այն ստորագրելու ամսաթվից և շարունակում է գործել մինչև Կողմերի կողմից սույն Պայմանագրով նախատեսված կամ դրանից բխող բոլոր պարտավորությունների ամբողջական կատարումը, սակայն ոչ ուշ, քան 2017թ. _____ ___-ը:

9.2. Պայմանագրի ժամկետից շուտ դադարման դեպքում համապատասխան կողմը պարտավոր է ոչ ուշ, քան Պայմանագրում իր մասնակցության դադարեցման պահից 20 (քսան) օր առաջ գրավոր տեղեկացնել մյուս կողմին իր մտադրության մասին՝ նշելով պատճառը:

9.3. Պատվիրատուի մեղքով Կողմերի կամ Կողմերից մեկի կողմից սույն Պայմանագրի դրույթների կատարման անհնարինության դեպքում Պատվիրատուն վճարում է Կատարողին Պայմանագրի դադարեցման պահին փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց:

9.4. Պայմանագրի գործողությունը դադարում է.

(ա) դադարեցման մասին Կողմերի համաձայնության դեպքում՝ դադարեցման մասին համաձայնագրում նշված ամսաթվից.

(բ) Պայմանագիրը կատարելուց Կողմերի միակողմանի հրաժարվելու դեպքում, օրենքով կամ Պայմանագրով սահմանված հիմքերով՝ մյուս Կողմի կողմից հրաժարվելու մասին ծանուցագիրը ստանալու ամսաթվից.

(գ) կիրառվող օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

10. Վեճերի կարգավորում

10.1. Սույն Պայմանագրի կապակցությամբ բոլոր վեճերն ու տարաձայնությունները կարգավորվում են Կողմերի կողմից բանակցությունների միջոցով:

10.2. Այն դեպքում, երբ վեճերը չեն կարող կարգավորվել բանակցությունների միջոցով, դրանք ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

11. Այլ պայմաններ

11.1. Կողմերը սույն Պայմանագրից առաջացած հարաբերությունների նկատմամբ կիրառում են ՀՀ օրենքը:

11.2. Կողմերից և ոչ մեկը իրավասու չէ փոխանցել սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքները և / կամ պարտավորությունները կամ դրանց մի մասը երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

11.3. Սույն Պայմանագրի Կողմերի հարաբերությունների համար նշանակություն ունեցող բոլոր ծանուցումները, հարցումները, համաձայնությունները և այլ փաստաթղթերը պետք է կատարվեն գրավոր և ներկայացվեն կամ առաքվեն համապատասխան կողմին ստորև նշված հասցեով կամ որևէ այլ հասցեով, որը կարող է հետագայում գրավոր նշվել մյուս կողմին: Բոլոր ծանուցումներն ու նամակագրությունն առաքվում են այնպիսի ճանապարհով, որը հնարավորություն է տալիս որոշել հասցեատիրոջ կողմից ծանուցման կամ նամակագրության ստացման պահը՝ սուրհանդակային ծառայության կամ փոստի միջոցով, և ուժի մեջ են մտնում կողմի կողմից դրանց ստացման պահից:

11.4. Սույն Պայմանագրի մեկ կամ մի քանի պայմանների (մասերի) անվավերությունը, բացառությամբ էական պայմանների (մասերի), չի հանգեցնում դրա մնացած պայմանների (մասերի) անվավերությանը:

11.5. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, մեկական օրինակ՝ Պատվիրատուի և Կատարողի համար:

11.6. Ստորև բերված հավելվածը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Համաձայնագիր N -------

սահմանված չափանիշներին համապատասխան վարկային կազմակերպություններին տրամադրվող

ֆինանսական տեղեկությունների պատրաստման դիտանցման

ք.Երևան ___ _____ 2016թ.

«Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ (այսուհետ՝ ***«Պատվիրատու»***), ի դեմս գլխավոր տնօրեն Արսեն Ռազմիկի Գրիգորյանի, որը գոր-ծում է Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

_____ (այսուհետ՝ ***«Աուդիտոր»***), ի դեմս _____, որը գործում է Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում համատեղ անվանվելով ***«Կողմեր»***, իսկ յուրաքանչյուրն առանձին՝ ***«Կողմ»***,

կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետ՝ ***«Համաձայնագիր»***) հետևյալի մասին.

Համաձայնագիրը, Աուդիտորի կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների վերաբերյալ աշխատանքային պայմանները՝ _____ (այսուհետ՝ ***«Աշխատանքային պայմաններ»***), ինչպես նաև դրանց անբաժանելի մաս հանդիսացող այլ փաստաթղթերը միասին կազմում են Համաձայնագիր:

Համաձայնագիրը համարվում է անվավեր՝ առանց Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից Աշխատանքային պայմանների ստորագրման:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Աուդիտորը պարտավորվում է Հաճախորդին մատուցել դիտարկման ծառայություններ (այսուհետ՝ ***«Ծառայություններ»***) հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (IAS) 34-ի հիման վրա 2016թ. հունիսի 30-ի դրությամբ կազմված՝ «Հաճախորդի (այսուհետ՝ ***«Աուդիտի ենթարկվող հաստատություն»***) ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ ***«Հաշվետվություններ»***) մասով: Դիտարկման հիման վրա Աուդիտորը եզրակացություն է ներկայացնում այն մասին, թե արդյոք Հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Աուդիտի ենթարկվող հաստատության ֆինանսական վիճակը 2016թ. հունիսի 30-ի դրությամբ, և 2016թ. հունիսի 30-ին ավարտված 6 ամիսների գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (IAS) 34-ին համապատասխան (այսուհետ՝ ***«Հաշվետվություն»***): Հաշվետվությունը հանդիսանում է Աշխատանքային պայմաններով սահմանված՝ Վերջնական արդյունք:

1.2. Աուդիտորը Ծառայությունները մատուցում է Դիտարկման հանձնարարությունների միջազգային ստանդարտ (ISRE) 2410-ի համապատասխան:

2. Աուդիտորին տեղեկատվության տրամադրման ժամանակացույցը

2.1. Հաճախորդը պարտավորվում է Աուդիտորին ներկայացնել հունիսի 2016թ. 30-ին ավարտված 6 ամիսների Հաշվետվությունները ոչ ուշ, քան 2016թ. օգոստոսի 5-ը:

3. Ծառայությունների մատուցման ժամանակացույցը

3.1. 2016թ. հունիսի 30-ին ավարտված 6 ամիսների Հաշվետվությունների դիտարկումն իրականացնելու համար Հաճախորդը պարտավորվում է Աուդիտորին հնարավորություն ընձեռել դիտարկումը սկսել Հաճախորդի գրասենյակում ոչ ուշ, քան 2016թ. օգոստոսի 5-ը:

3.2. Այն դեպքերում, երբ Հաճախորդը ժամանակին է կատարում Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները, 2016թ. հունիսի 30-ին ավարտված 6 ամիսների Հաշվետվությունը պետք է Հաճախորդին ներկայացվի ոչ ուշ, քան 2016թ. օգոստոսի 15-ը:

3.3. Աուդիտորը պատասխանատվություն չի կրում Աուդիտորական եզրակացությունը ուշացնելու և Համաձայնագրի 3.2. կետով նշված ժամկետներում այն չներկայացնելու համար, եթե Հաճախորդը չի կատարում Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները, ներառյալ չպահպանելով Համաձայնագրի 2-րդ և 3-րդ հոդվածներում նշված ժամկետները, կամ տեղի են ունենում այնպիսի հանգամանքներ, որոնք կանխատեսելի չէին Աուդիտորի կամ Հաճախորդի կողմից՝ ելնելով իրադարձությունների բնականոն ընթացքից:

3.4. Եթե Հաճախորդը Համաձայնագրի 2.1 կետով սահմանված ժամկետից հետո Հաշվետվություններում կատարում է որևիցե փոփոխություն (բացառությամբ Աուդիտորի կողմից առաջարկված ճշգրտումների), կամ Համաձայնագրի 2.1 կետով սահմանված ժամկետում չի ներկայացնում Հաշվետվությունները, կամ թույլ է տալիս Համաձայնագրի դրույթների խախտումներ, որոնք չեն հանգեցնում Համաձայնագրի լուծմանը, ապա.

- Աուդիտորից պատասխանատվություն է հանվում Համաձայնագրի 3.2. կետով սահմանված ժամկետներում Հաշվետվությունը ներկայացնելու համար.

- Աուդիտորի կողմից ծախսված ժամաքանակի լրացուցիչ ծախսը, որը ներառված չէ Համաձայնագրի 4.1. կետում նշված Ծառայությունների ծախսի մեջ, Աուդիտորի կողմից առանձին ներառվում է հաշիվ-

ապրանքագրի մեջ լրացուցիչ ծախսված ժամաքանակի մասով կատարված «Վերադիր ծախսեր» տողում՝ 3-րդ հոդվածին համապատասխան, և ենթակա է վճարման Հաճախորդի կողմից:

4. Ծառայությունների գինը

4.1. Հաճախորդը պարտավորվում է Ծառայությունների դիմաց Աուդիտորին վճարել այն գինը, որը ներառում է Աուդիտորի ծառայության վճարը _____ (_____) ՀՀ դրամ գումարի չափով: Ծառայությունների գինը չի ներառում գործող դրույքաչափով հաշվարկված ԱԱՀ-ն:

4.2. Աուդիտորը Հաճախորդին ներկայացնում է Ծառայությունների վճարման կանխավճարային հաշիվը և հաշիվ-ապրանքագիրը՝ հետևյալ ժամանակացույցին համապատասխան՝

4.2.1. _____ (_____) ՀՀ դրամի կանխավճարային հաշիվը ներկայացվում է Հաճախորդին՝ մինչև 2016թ. օգոստոսի 5-ը,

4.2.2. _____ (_____) ՀՀ դրամի և գործող դրույքաչափով հաշվարկված ԱԱՀ-ի գումարի չափով հաշիվ-ապրանքագիրը ներկայացվում է Հաճախորդին Հաշվետվության նախագիծը ներկայացնելուց 7 (յոթ) օրվա ընթացքում:

4.3. Ծառայությունների վճարումը կատարվում է Համաձայնագրով և Աշխատանքային պայմաններով սահմանված ընթացակարգով և ժամկետներում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերը կրում են պատասխանատվություն Համաձայնագիրով պարտավորությունները չկատարելու, կամ ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության համապատասխան:

5.2. Հաճախորդի կողմից Համաձայնագրի 4.2.1. և 4.2.2. կետերի պայմանների խախտման դեպքում վերջինս վճարում է տույժ Աուդիտորին՝ չկատարած դրամական պարտավորության 0,1% չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար: Հաշվարկված տույժերի գումարը չի կարող գերազանցել Ծառայությունների արժեքի 10 (տաս) %:

5.3. Աուդիտորի կողմից Ծառայությունների ավարտման ժամկետի խախտման դեպքում, Հաճախորդը իրավասու է տույժ հաշվարկել Աշխատանքի գնի 0,1% չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, որը կհաշվանցվի Պայմանագրի 4.2.2. կետի համաձայն Աուդիտորին վճարվելիք գումարից: Հաշվարկված տույժերի գումարը չի կարող գերազանցել Ծառայությունների արժեքի 10 (տաս) %:

5.4. Համաձայնագրի կատարման ընթացքում ծագած բոլոր տարաձայնություններն ու վեճերը ենթակա են կարգավորման բանակցությունների և խորհրդատվությունների միջոցով, իսկ դրանցով հաջողության չհասնելու դեպքում՝ դատական կարգով:

6. Այլ դրույթներ

6.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման ամսաթվից և գործում է մինչև Համաձայնագրով սահմանված բոլոր պարտավորությունների կատարման ավարտը:

6.2. Համաձայնագրի բոլոր Հավելվածները, ներառյալ Աշխատանքային պայմանները, կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը, եթե ստորագրված են Կողմերի լիազորված ներկայացուցիչների կողմից:

Կողմերի միջև հարաբերությունները, որոնք ներառված չեն Համաձայնագրում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

6.4. Համաձայնագրում գործածված մեծատառ տերմինները, որոնց սահմանումներն առկա չեն Համաձայնագրում, մեկնաբանվում են Աշխատանքային պայմաններում նշված տերմիններին և սահմանումներին համապատասխան: